ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ ԱԼԲԵՐՏԻ

ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1914-2014 ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հայրունի Աշոտ Նորայրի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարուքյան Արմեն Յոլակի

պատմական գիտությունների թեկնածու
Միրզոյան Արամ Ռոբերտի

Առաջատար կազմակերպություն՝ «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. սեպտեմբերի 26-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. հուլիսի 21-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Աշխարհաքաղաքական գործընթացներում թելադրողի դեր ստանձնելու, համաշխարհային ռեսուրսների առավել մեծ հատվածին տիրելու, ի վերջո, աշխարհի վերաբաժանման համար Մեծ տերությունների երկու հակառակորդ խմբավորումների՝ Անտանտի և Եռյակ դաշինքի միջև խորացող հակամարտությունն ուղղակիորեն առնչվում էր նաև Օսմանյան կայսրության ժառանգությանը, որի բաղկացուցիչներից էր Հայկական հարցը:

Հայ քաղաքական շրջանները 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմների ժամանակաշրջանում ստեղծված իրադրությունը նպաստավոր էին համարում տերությունների աջակցությամբ իրագործելու 1878 թ. Բեռլինի պայմանագրում ամրագրված, սակայն չիրականացված բարեփոխումները: Ռուսաստանի նախաձեռնությամբ դարձյալ մտնելով միջազգային օրակարգ՝ հայկական բարեփոխումների հարցը և այդ առնչությամբ տերությունների միջև սկսված բանակցություններն ի ցույց հանեցին, մասնավորապես, Ռուսաստանի և Գերմանիայի միջև շահերի սուր բախումը:

Եթե Ռուսաստանը փորձում էր բարեփոխումների իրականացման միջոցով ձեռք բերել հայ ժողովրդի համակրանքն ու ապահովել իր քաղաքական գերակայությունը տարածաշրջանում, ապա Գերմանիան, որը նախկինում հանդես էր գալիս Օսմանյան կայսրության անվերապահ աջակցի դերում, չկարողանալով խափանել բարեփոխումների շուրջ սկսվող քննարկումները, վճռեց դրանց եռանդագին մասնակցել՝ Ռուսաստանի հավակնությունները ձախողելու, հնարավորինս Օսմանյան կայսրության շահերը պաշտպանելու, իսկ բարեփոխումների անխուսափելիության դեպքում՝ նաև հայերի համակրանքը ձեռք բերելու համար. հանգամանք, որ Գերմանիան նույնպես Օսմանյան կայսրության թուլացման կամ փլուզման դեպքում համարում էր կարևոր նախադրյալ իր աշխարհաքաղաքական ազդեցությունը տարածաշրջանում ապահովելու համար:

Վերոնշյալից ելնելով՝ գերմանական կառավարությունն այս փուլում փորձում է կապ հաստատել հայ քաղաքական ուժերի և հատկապես Հ. Յ. Դաշնակցության (այսուհետև՝ նաև ՀՅԴ) հետ: Հասու լինելով բարեփոխումների հարցում Գերմանիայի նշանակալից դերակատարությանը՝ հայկական կողմը նույնպես շահագրգռվածություն է ցուցաբերում նրա հետ հարաբերությունների հաստատման ու զարգացման հարցերում:

Նման պայմաններում հայ-գերմանական կրթամշակութային, տնտեսական և տարաբնույթ այլ հարաբերությունները համակարգելու և զարգացնելու նպատակով Առաջին աշխարհամարտի նախօրյակին հիմնադրվում է Գերմանա-հայկական ընկերությունը (այսուհետև՝ նաև ԳՀԸ, գերմ.՝ Die Deutsch-Armenische Gesellschaft, DAG), որի ամբողջական պատմության ուսումնասիրությանն էլ նվիրված է սույն ատենախոսությունը:

Հայոց ցեղասպանության ընթացքում Գերմանիայի վարած քաղաքականությունը, ինչպես նաև՝ խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված քաղաքական պատկերացումները չեն նպաստել հայ-գերմանական հարաբերություններն ընդհանրապես և ԳՀԸ-ի պատմությունը մասնավորապես համակողմանի և օբյեկտիվ

ուսումնասիրելուն:

Հետխորհրդային ժամանակաշրջանում հայ-գերմանական բազմաբնույթ կապերի զարգացումը, գերմանական արխիվների հասանելիությունը և հատկապես 2016 թ. գերմանական Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցության ընդունումն այդ առնչությամբ նոր իրադրություն և հնարավորություններ են ստեղծել: Ըստ այդմ, շուրջ հարյուրամյա ժամանակահատվածում ԳՀԸ-ի գործունեության համակողմանի, անաչառ ուսումնասիրությունն ու լուսաբանումն ունեն արդիական կարևոր նշանակություն:

Հայ-գերմանական ներկայիս միջպետական հարաբերությունների ժամանակաշրջանում ընկերության գործունեության պատմության ուսումնասիրությունն ու գնահատումն ունեն ոչ միայն արդիական գիտական, այլև քաղաքական-գործնական նշանակություն և կարող են նպաստել երկկողմ քաղաքական, տնտեսական ու կրթամշակութային հարաբերությունների զարգացմանը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը ԳՀԸ-ի հարյուրամյա պատմության ուսումնասիրությունն ու ներկայացումն է: Այդ նպատակի իրականացման համար առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

– Հետազոտել այն նախադրյալները, որոնք հիմք են հանդիսացել ընկերության հիմնադրման, ապա նաև՝ վերստեղծման համար,

– Բացահայտել նշված երկու գործընթացների ակունքներում կանգնած անհատների՝ հայ ժողովրդի և հայ-գերմանական երկկողմ կապերի զարգացման նկատմամբ ունեցած հետաքրքրության շարժառիթները,

– Ներկայացնել ԳՀԸ-ի նպատակներն ու դրանց իրականացման միջոցները, վարչության կառուցվածքն ու կազմը, եկամուտները,

– Քննել Առաջին աշխարհամարտի նախընթաց ժամանակաշրջանում և պատերազմի տարիներին ընկերության ծավալած գործունեությունը, վեր հանել նրա առջև ծառացած խնդիրներն ու դրանց լուծման ուղղությամբ որդեգրած պայքարի եղանակները,

– Ուսումնասիրել ու գնահատել Առաջին աշխարհամարտից հետո ու Երկրորդ աշխարհամարտի տարիներին կազմակերպության իրականացրած աշխատանքները և ներկայացնել դրա ժամանակավոր լուծարման պատճառները,

– Հետազոտել ԳՀԸ-ի վերստեղծումից հետո նրա կողմից որպես առաջնահերթություն դիտարկվող խնդիրները և գործունեության առանձնահատկությունները,

– Ի ցույց հանել կազմակերպության իրականացրած աշխատանքները և դրանց արդյունքները:

Ատենախոսության գիտական նորույթը: Թեմայի ուսումնասիրության ուղղությամբ թեև կատարված է որոշակի աշխատանք, սակայն մինչ օրս հրապարակի վրա գոյություն չունի ԳՀԸ-ի պատմությունն ամբողջականորեն ներկայացնող որևէ ուսումնասիրություն: Սույն ատենախոսությամբ փորձ է արվում լրացնել այդ բացը: Քննությունը կատարելով մեծ մասամբ պատմագիտության մեջ դեռևս շրջանառության մեջ չդրված արժեքավոր գերմանական և հայկական սկզբնաղբյուրների լայն հենքի վրա՝ վեր են հանվում ընկերության գործունեության պատմության դեռևս չլուսաբանված էջերը: Մասնավորապես առաջին անգամ ներկայացվում ու գնահատվում են ԳՀԸ-ի կողմից հայ կամավորական շարժումը կասեցնելու ուղղությամբ ձեռնարկված քայլերը, Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ընթացքում Հայկական հարցի հայանպաստ լուծմանը

նպաստելու համար ի հայտ բերված նախաձեռնությունը, 1918 թ. հունիսի սկզբին Հայաստանի կառավարության՝ Բեռլին ժամանած պատվիրակությանը (Հ. Օհանջանյան և Ա. Զուրաբյան) ցուցաբերված աջակցությունը, նոր փաստեր են ի հայտ բերվում հիտլերյան վարչակարգի ժամանակաշրջանում ընկերության գործունեության վերաբերյալ: Աշխատությունում առաջին անգամ լուսաբանվում ու գնահատվում են նաև 1988-1991 թթ. Արցախյան հիմնախնդրի հայանպաստ կարգավորմանը նպաստելու և գերմանական հասարակության իրազեկման, 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացմանն աջակցելու նպատակով ԳՀԸ-ի կողմից ծավալված աշխատանքները և դրանց արդյունքները, բացահայտվում է Թուրքիայի՝ Եվրոպական միությանն (ԵՄ) անդամակցության հարցի նկատմամբ կազմակերպության վարչության դիրքորոշումը, ներկայացվում են ԳՀԸ-ի վերստեղծումից հետո նրա կողմից կազմակերպված գիտաժողովների և մշակութային միջոցառումների մանրամասները, ընկերության վարչության կառուցվածքն ու կազմը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել հայ-գերմանական կապերի պատմության ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների, ուսանողների, քաղաքական գործիչների, դիվանագետների և, ընդհանրապես, հայագիտությամբ հետաքրքրվող ընթերցող հասարակության համար:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Ուսումնասիրությունն իրականացվել է տարաբնույթ սկզբնաղբյուրների և թեմային վերաբերվող գրականության համեմատական ու քննական վերլուծության մեթոդաբանությամբ, պատմանկարագրողական մեթոդի և պատմականության սկզբունքի կիրառմամբ:

Հետազոտության ժամանակագրական շրջանակը: Հետազոտության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է 1914-2014 թթ.: Սակայն ԳՀԸ-ի պատմությունն առավել ամբողջական և հիմնավոր ներկայացնելու նպատակով կատարել ենք որոշ շեղումներ՝ առաջին գլխի շարադրանքում համառոտ ակնարկ կատարելով XIX դարի 90-ական թթ. Գերմանիայում հայանպաստ շարժման սկզբնավորման ու հետագա ընթացքի մասին, երրորդ գլխի շարադրանքում անդրադառնալով 2015 թ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ ընկերության կողմից կազմակերպված միջոցառումներին: Նշենք նաև, որ ԳՀԸ-ի գործունեությունը ներկայացրել ենք որոշ ժամանակագրական խզումներով: Պատճառներից մեկը սկզբնաղբյուրներում լռությունն է կամ համապատասխան փաստաթղթերի բացակայությունը ընկերության գործունեության տվյալ ժամանակահատվածի մասին: Մյուս պատճառն այն է, որ վերջինս ունեցել է անկումային պահեր և չի գործել, ուստի ուսումնասիրությունից դուրս է մնացել այդ տարիների ժամանակահատվածը: Խոսքը նախևառաջ վերաբերվում է 1923-1925 թթ., երբ ԳՀԸ-ն, գտնվելով աննախադեպ ծանր ֆինանսական դրության մեջ, զրկվել էր որևէ աշխատանք իրականացնելու կարողությունից և սոսկ պայքարում էր իր գոյության համար: 1926 թ. այն վերադառնում է իր բնականոն գործունեությանը: Թե ի՞նչ աշխատանքներ է իրականացրել ընկերությունը 1930 թ. մինչև Գերմանիայում հիտլերյան վարչակարգի հաստատումը (1933 թ.), սկզբնաղբյուրների բացակայության պատճառով մեզ հայտնի չէ: Վերջինը 1944-1971 թթ. ընդգրկող ժամանակահատվածն է. 1944 թ. ԳՀԸ-ն դադարեցնում է իր պաշտոնական օրգանի հրատարակությունը և, ըստ երևույթին, նաև՝ գործունեությունը, իսկ 1956 թ. հեռացվում է Բեռլինի միությունների

ցանկից: Տևական դադարից հետո՝ 1972 թ., այն վերաբացվում է և զարգացնում գործունեությունը՝ հավատարիմ մնալով իր ավանդույթներին:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնը: Դրա հիմնական դրույթները և արդյունքները հրապարակվել են տասներկու գիտական հոդվածների տեսքով:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Ներկա ատենախոսության աղբյուրագիտական հենքն են դարձել նախնառաջ Հայաստանի ազգային արխիվում (այսուհետև՝ ՀԱԱ)[1], Բեռլինի Ավետարանական եկեղեցիների կենտրոնական արխիվում[2], Պոտսդամի «Լեփսիուսի տանը»[3] պահվող համապատասխան փաստաթղթերն ու տեղեկագրերը, www.armenocide.de կայքի[4] էջերում և ԳՀԸ-ի պաշտոնական կայքէջում[5] զետեղված վավերագրերը, ընկերության վերստեղծման գործընթացի մասնակից Շ. Հովասափյանի և դրա ներկայիս առաջնորդ Ր. Քանդյանի կողմից մեզ հատկացված տեղեկագրերը[6]:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքն են դարձել նաև Յ. Լեփսիուսի, Վ. Միքայելյանի, Ս. Վրացյանի, Գ. Լազյանի, Հ. Ազատյանի, Լեոյի կազմած փաստաթղթերի ժողովածուները[7]:

Նշված սկզբնաղբյուրներն արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ԳՀԸ-ի հիմնադրման, վերստեղծման և գործունեության, ինչպես նաև՝ մեր կողմից հետազոտվող թեմայի հետ կապված՝ հարակից այլ հարցերի ու իրողությունների վերաբերյալ:

Մեր հետազոտության համար էապես կարևորվել են նաև ԳՀԸ-ի հիմնադիր անդամների՝ Լ. Նազարյանցի (Ռ. Լեոնեան)[8] և Ռ. Դարբինյանի[9]՝ հայալեզու «Հայրենիք»

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 457(Գերմանա-հայկական կուլտուրական ընկերություն), ցուցակ 1, գործ 2, 4, 14:

[2] Տե՛ս Das Evangelische Zentralarchiv in Berlin (EZA Berlin), որի փաստաթղթերը համարակալված չեն:

[3] Տե՛ս Lepsius-Archiv Potsdam (LAP), № 1221, 1223, 1224, 1227, 2894, 2903, 12154, 12371, 13321, 13826, 13827, 15462, 17037, Brief von Lepsius an Kurt Hahn, ohne Datum und Archivnummer im LAP.

[4] Տե՛ս http://www.armenocide.de/.

[5] Տե՛ս https://www.deutscharmenischegesellschaft.de/.

[6] Տե՛ս Շ. Հովասափյանի՝ մեզ տրամադրված տեղեկագիրը (հայերեն), ձեռք է բերվել 10.11.2021: Ր. Քանդյանի՝ մեզ տրամադրված տեղեկագիրը (գերմաներեն), ձեռք է բերվել 27.11.2021:

[7] Տե՛ս Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischen Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, "Der Tempelverlag", 1919. Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Miqaeljan, Jerewan, "Druckerei der Akademie der Wissenschaften Armeniens", 2004: Հին թղթեր նոր պատմութեան համար, կազմող՝ Վրացեան Ս., Պէյրութ, «Մշակ», 1962: Հայաստան եւ Հայ դատը: Հայոռուս յարաբերութիւններու լուսին տակ, կազմող՝ Գ. Լազեան, Ե., «Ադանա» հրատ., 1991: Բախտորոշ պայմանագրեր, կազմող և առաջաբանի հեղինակ՝ Հ. Ազատյան, Ե., «Տիգրան Մեծ», 2002: Լեո, Հայկական հարցի վավերագրերը (վերահրատարակություն), կազմող՝ Է. Մինասյան, Ե., «ԵՊՀ հրատ.», 2014:

[8] Տե՛ս Լեոնեան Ռ., Մեծ աղէտի նախօրէին, // «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1927, թիւ 2 (62), 4 (52), 5 (53), 7 (55): Տե՛ս նաև Լեոնեան Ռ., Մեծ աղէտի օրերուն,// «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1928, թիւ 5 (65), 8 (68):

ամսագրի էջերում զետեղված հուշերը, Պ. Ռոհրբախի «Կովկասից մինչև Միջերկրական ծով» ուղեգրությունը և «Սատանայի ձեռագրի շուրջ» հուշագրությունը[10], որոնք հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմել ընկերության հիմնադրման մասին, կարևոր մանրամասներ են հաղորդում Առաջին աշխարհամարտի տարիներին և այդուհետ նրա ծավալած գործունեության վերաբերյալ:

ԳՀԸ-ի հիմնադիրների, ղեկավարների ու աշխատակիցների, մասնավորապես Յ. Լեփսիուսի «Հայ ժողովրդի մահուղին», «Արևելքի վերածնունդը», Ռ. Շեֆերի «Գերմանական արևելյան առաքելության պատմությունը», Պ. Հաուպտմանի «Եկեղեցին Արևելքում» գրքերում, 1934 թ. ընկերության կողմից հրապարակված «Հայկականություն-արիականություն» ժողովածուում[11] (ատենախոսությունը շարադրելիս օգտվել ենք սույն ժողովածուի հայերեն թարգմանությունից[12]) ամփոփված փաստերն ու վկայությունները մեզ օգնել են Յ. Լեփսիուսի և ԳՀԸ-ի գործունեության հետ կապված մի շարք հարցեր պարզաբանելիս, կազմակերպության վերստեղծման պատմությունը լուսաբանելիս:

Հատկապես վերջին հարցում մեզ զգալիորեն օգնել է նաև Է. Մեյերի և Ա. Բերքյանի համահեղինակությամբ կազմված և 1988 թ. ԳՀԸ-ի կողմից հրապարակված «Հռենոսի և Արաքսի միջև: 900 տարվա գերմանա-հայկական հարաբերություններ»[13] գիրքը (մեր ուսումնասիրության ընթացում օգտվել ենք գրքի հայերեն թարգմանությունից[14]): Լուսաբանելով հայ-գերմանական դարավոր կապերի պատմությունը և այդ համատեքստում ներկայացնելով ընկերության հիմնադրմանն ու գործունեությանն առնչվող փաստեր՝ այն նաև ամփոփում է Ա. Բերքյանի վկայությունները կազմակերպության վերաբացման և աշխատանքների վերսկսման վերաբերյալ:

Ատենախոսությունը շարադրելիս, անշուշտ, չէինք կարող անտեսել ԳՀԸ-ի կողմից հրատարակված պարբերականները, որոնց էջերում զետեղված հոդվածների մեծագույն

---

[9] Տե՛ս Դարբինեան Ռ., Կեանքիս գրքէն (Փշրանքներ իմ յուշերէն), // «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1959, № 5, 6, 7, 8:

[10] Տե՛ս Rohrbach P., Vom Kaukasus zum Mittelmeer. Eine Hochzeits- und Studienreise durch Armenien, Leipzig und Berlin, "Druck und Verlag von B. G. Taubner", 1903: Նույնի՝ Um das Teufels Handschrift. Zwei Menschenalter erlebter Weltgeschichte, Hamburg, "Hans Dulk", 1953.

[11] Տե՛ս Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes. Bericht über das Schicksal des armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges, Porsdam, "Der Tempel-Verlag", 1927: Նույնի՝ Die Wiedergeburt des Orients, ausgewählt, eingeleitet und herausgegeben von A. Baumann, Nürnberg,"Verlag für Theologie und Religionswissenschaft", 2007. Schäfer R., Geschichte der Deutschen Orient-Mission, Potsdam, "Fleischmann & Grauer", 1932. Kirche im Osten. Studien zur osteuropäischen Kirchengeschichte und Kirchenkunde (P. Hauptmann (Hg.)), Band 21/22, Göttingen, "Vandenhoeck & Ruprecht", 1979. "Armeniertum-Ariertum" (hg. von der Deutsch-Armenischen Gesellschaft Berlin unter Mitwirkung von H. H. Schaeder u. a.), Potsdam, 1934:

[12] Տե՛ս Շթիիր Է., Գերմանա-հայկական մշակութային առնչությունները, //«Հայկականութիին-արիականութիին», գերմաներենից թարգմանեց՝ Տոնոյան Ա., Ե., «Փրինթինֆո», 2001, էջ 54-64: Շեֆեր Ռ., Արեւմտյան մշակութային աշխարհը եւ հայերը, // նշվ. ժող., էջ 84-89: Ռոհրբախ Պ., Աւելորդ հարց, // նշվ. ժող., էջ 90-94:

[13] Տե՛ս Meyer E., Berkian A. J., Zwischen Rhein und Arax. Neunhundert Jahre deutsch-armenische Beziehungen, Oldenburg, "Heinz Holzberg Verlag", 1988.

[14] Տե՛ս Մեյեր Է., Բերքյան Ա. Յ., Հռենոսի և Արաքսի միջև: 900 տարվա գերմանա-հայկական հարաբերություններ, թարգմ.՝ Լ. Բերքյան-Աբրահամյան, Ե., «Տիգրան Մեծ», 2016:

մասը պատկանում է նրա ղեկավարների ու աշխատակիցների գրչին:

Նշենք, որ իր գոյության ամբողջ ընթացքում ԳՀԸ-ն որոշ ընդմիջումներով լույս է ընծայել 5 պարբերական: Դրանցից ժամանակային առումով առաջինը երկլեզու՝ գերմաներեն և հայերեն, "Mesrop"-ն է («Մեսրոպ»), որը կարճ կյանք ունեցավ՝ միայն մեկ համար: Հանդեսի երկրորդ համարն արդեն ուղարկվել էր տպարան, երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, և ի հայտ եկած խոչընդոտների պատճառով դրա հրատարակությունը կասեցվեց ու հետագայում էլ տեղի չունեցավ: Պատերազմի ավարտից հետո ընկերությունը հիմնեց մամուլի նոր օրգան՝ "Deutsch-Armenische Korrespondenz" («Գերմանա-հայկական թղթակցություն») թերթը, որը հրատարակվում էր 1918-1921 թթ.: 1928 թ. լույս ընծայվեց մեկ այլ պարբերական, որը կոչվում էր "Mitteilungen der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin" («Գերմանա-հայկական ընկերության հաղորդագրություններ»): Դրա հրատարակությունը 1928 թ. նոյեմբերի 2-րդ համարից հետո կասեցվեց՝ վերականգնվելով 1933 թ.: ԳՀԸ-ի տեղեկատվական գործունեությունը չդադարեց նույնիսկ Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Այն իրագործվում էր 1937 թ. հիմնված "Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin" («Գերմանա-հայկական ընկերության տեղեկաթերթ») պարբերականի միջոցով, որը 1943 թ. վերանվանվեց "Armenien. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin" («Հայաստան: Գերմանա-հայկական ընկերության տեղեկաթերթ»): Դրա վերջին համարը լույս տեսավ 1944 թ. սեպտեմբերին (№ 17-18): Ընկերության մամուլի օրգաններից ժամանակային, ծավալի և բովանդակային առումներով ամենաընդգրկունը 1973 թ. հիմնված և մինչ օրս հրատարակվող "Armenisch-Deutsche Korrespondenz" («Հայ-գերմանական թղթակցություն») եռամյակային պարբերականն է[15]:

ԳՀԸ-ի այդ պարբերականների էջերում ամբարված է հարուստ աղբյուրագիտական նյութ, որի քննությունը մեզ հնարավորություն է տվել համակողմանիորեն լուսաբանել ընկերության պատմությունը՝ ի ցույց հանելով նրա ծավալած գործունեության

[15] Տե՛ս "Mesrop. Zeitschrift der Deutsch-Armenischen Gesellschaft", Berlin, 1914, 1. Jahrgang. "Deutsch-Armenische Korrespondenz", Berlin, Jg. 1918, № 1, 2, 1919, № 5, 7, 8: Բեռլինի պետական գրադարանը (Staatsbibliothek zu Berlin) թվայնացրել է ԳՀԸ-ի՝ նշված երկու օրգանները և տեղադրել առցանց՝ համապատասխանաբար https://digital.staatsbibliothekberlin.de/werkansicht?PPN=PPN1023824140&PHYSID=PHYS_0005 և PPN=PPN102382275X&PHYSID=PHYS_0003&DMDID=DMDLOG_0001&fbclid=IwAR38NUYoLbt6RvBNeRL0Wal_3uWOHfP5RtOA1ABIMBoJ6amvHhmygl7Q7EU հղումների ներքո: "Mitteilungen der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin", Berlin, Jg. 1928, № 2: Արխիվային փնտրտուքների ընթացքում մեզ չի հաջողվել գտնել այս պարբերականի՝ 1933 թ. վերականգնումից հետո լույս տեսած համարները: "Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin", Berlin, Jg. 1937, № 1, 1938, № 2, 10, 1939, № 4, 5-6, 1940, № 7-8, 9, 10, 1942, № 13-14. "Armenien. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin", Berlin, Jg. 1943, № 15-16, 1944, № 17-18. "Armenisch-Deutsche Korrespondenz", Mainz-Heidelberg, Jg. 1973, № 2, 1974, № 5, № 7, Mainz, 1975, № 9, 10, 1976, № 13, 15, 1977, № 17, № 1978, № 21, 1979, № 24, 1980, № 29, 1981, № 31, 33, 1982, № 36/37, 39, 1983, № 40, 1984, № 45, 1986, № 52/53, 1987, № 55, 57, 1988, № 60, 61, № 1988-1989, № 62, 1989, № 64, 65, 66, 1990, № 67, 69, 1991, № 71/72, 73, 1993, № 81, Frankfurt am Mein, 1994, № 83, 1995, № 88, 89, 90, 1996, № 91, 92, 94, 1997, № 96, 1998, № 99, 1999, № 104, 2001, № 111, 112, 2002, № 117, 118, 2005, № 127/128, 2007, № 135, 138, 2008, № 139, 2010, № 148, 2011, № 152, 2012, № 156, 2013, № 158, 161, 2014, № 163, 164, 165.

առանձնահատկությունները, կատարված աշխատանքների հիմնական արդյունքները:

Ատենախոսությունը շարադրելիս որոշակիորեն կարևորվել են նաև «Քրիստոնյա աշխարհի բարեկամների միություն» ("Vereinigung der Freunde der Christliche Welt") կազմակերպության "An die Freunde" («Բարեկամներին») և «Անհրաժեշտ օգնություն» ("Das Notwendige Liebeswerk") կազմակերպության համանուն պարբերականները[16]:

Օգտագործել ենք նաև հայալեզու «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում, «Մշակ» թերթում, «Հայրենիք» օրաթերթում տպագրված՝ խնդրո առարկա ընկերությանը վերաբերվող նյութերը[17]:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում օգտագործվել է նաև ԳՀԸ-ի 75-ամյա հոբելյանի առիթով հրապարակված ժողովածուն[18]: Այն ներառում է հինգ հոդվածներ, որոնցից մեր կողմից հետազոտության առարկա դարձած թեմային վերաբերում են միայն երկուսը: Մեկը Հ. Գոլցի գրչին պատկանող ««Հայկական բարեփոխումներն» Օսմանյան կայսրությունում. Յոհաննես Լեփսիուսը և Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը»[19] հոդվածն է, որտեղ հեղինակը, անդրադառնալով Հայկական հարցին, կենտրոնանում է 1912–1913 թթ. Արևմտյան Հայաստանում բարեփոխումների համար միջազգային դիվանագիտության կողմից իրականացվող աշխատանքներին Յ. Լեփսիուսի մասնակցության վրա ու արժևորվում է նրա դերը խնդրո առարկա ընկերության հիմնադրման գործում, որոշ փաստեր է ներկայացնում Գերմանա-թուրքական միության (գերմ.՝ Die Deutsch-Türkische Vereinigung, DTV) և Կովկասի գերմանա-հայկական մշակութային միության վերաբերյալ: Մյուսը՝ Պ.-Ֆ. Ռյոսելերի «Գերմանա-հայկական ընկերության պատմությունը»[20] հոդվածն է, որտեղ մակերեսայնորեն, առանց խնդրի պատճառահետևանքային կապերի բացահայտման, ներկայացվում է ընկերության պատմությունը՝ սկսած հիմնադրումից մինչև Երկրորդ աշխարհամարտի ավարտը: Փոքրիկ անդրադարձ է կատարվում նրա վերստեղծման պատմությանը և առաջին մի քանի տարիների գործունեությանը:

Հիշատակման է արժանի նաև ԳՀԸ-ի 100-ամյա հոբելյանի առիթով հրատարակված ժողովածուն[21], որտեղ զետեղված հոդվածներից երեքը՝ Ա. Մայսների «Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը»[22], Պ.-Ֆ. Ռյոսելերի «Գերմանա-հայկական ընկերությունն Առաջին աշխարհամարտից հետո՝ մինչև 1956 թ.»[23], Ր. Քանդյանի

[16] Տե՛ս "An die Freunde. Vertrauliche d.i. nicht für die Öffentlichkeit bestimmte Mitteilungen", Eisenach, Jg. 1907, № 21. "Das Notwendige Liebeswerk. Vertrauliche d. i. nicht für die Öffentlichkeit bestimmte Mitteilungen", Schackstadt, Jg. 1920, unnummeriert.

[17] Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 2009, № 1, «Մշակ», Թիֆլիս, 1914, № 153, «Հայրենիք» օրաթերթ, Պոսթըն, 1933, թիւ 6526, 1955, № 13, 1962, № 15, 343:

[18] Տե՛ս "75 Jahre Deutsch-Armenische Gesellschaft. Festschrift" (hg. von der Deutsch-Armenischen Gesellschaft), Mainz, 1989.

[19] Տե՛ս Goltz H., Die "armenischen Reformen" im Osmanischen Reich, Johannes Lepsius und die Gründung der Deutsch-Armenischen Gesellschaft, // նշվ. ժող., S. 4-76.

[20] Տե՛ս Röseler P.-F., Die Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft, նշվ. ժող., S. 77-99.

[21] Տե՛ս "100 Jahre Deutsch-Armenische Gesellschaft (1914-2014): erinnern. gedenken. gestalten" (Deutsch-Armenische Gesellschaft (Hg.)), Hannover, "Carl Küster Druckerei", 2014.

[22] Տե՛ս Meißner A., Die Gründung der Deutsch-Armenischen Gesellschaft, // նշվ. ժող., 2014, S. 83-124.

[23] Տե՛ս Röseler P.-F., Die DAG vom Ende des Ersten Weltkrieges bis 1956, // նշվ. ժող., S. 184-192.

«Փյունիկ մոխրի միջից. 1972 թ. վերստեղծումից մինչև այսօր»[24], մեկը մյուսին շարունակելով՝ ներկայացնում են ընկերության հարյուրամյա պատմությունը:

Ա. Մայսների հոդվածը, անշուշտ, արժեքավոր է և բավական մանրամասն ներկայացնում է ԳՀԸ-ի հիմնադրման պատմությունը, սակայն հեղինակը կենտրոնանում է միայն հայ ժողովրդի գերմանացի բարեկամների կողմից իրականացված աշխատանքների վրա՝ չանդրադառնալով նշված հարցում ՀՅԴ-ի ունեցած դերակատարությանը:

Պ.-Ֆ. Ռյոսելերի հոդվածը բովանդակային առումով կրկնում է նրա՝ ընկերության 75-ամյակին նվիրված ժողովածուում հրապարակված հոդվածը:

Ր. Քանդյանի հոդվածն ընդհանուր գծերով ներկայացնում է ԳՀԸ-ի վերստեղծման պատմությունը և հակիրճ տեղեկություններ է հաղորդում մինչև 2014 թ. դրա կողմից կազմակերպված գիտաժողովների, դասախոսությունների, մշակութային միջոցառումների, հրապարակված գրքերի, դրա մամուլի օրգանի և պաշտոնական կայքէջի վերաբերյալ:

Ժողովածուում զետեղված են հայ-գերմանական առնչություններին վերաբերվող ուրիշ ուշագրավ ուսումնասիրություններ ևս: Մեր հետազոտության ընթացքում առանձնապես օգտվել ենք Ր. Քանդյանի «Ճանապարհը դեպի Բունդեսթագի «Հայկական բանաձև»»[25] հոդվածից, որը ներկայացնում է Գերմանիայի Բունդեսթագի կողմից 2005 թ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևի ընդունման գործընթացը, շարժառիթները, դրա դրույթների իրականացմանը նպաստելու համար ԳՀԸ-ի գործադրած ջանքերը, ինչպես նաև՝ Ա. Դրոստ-Աբգարյանի հոդվածից[26], որը հաղորդում է արժեքավոր տեղեկություններ ընկերության ակունքներում կանգնած հեղինակավոր այրերի կենսագրությունից:

Օգտվել ենք նաև Ա. Մայսների՝ 2010 թ. տպագրված «Մարտին Ռադեի «Քրիստոնյա Արևելքը» և Հայաստանը»[27] մենագրությունից, որը քննում է "Die Christliche Welt" (այսուհետև՝ նաև ChW, հայ.՝ «Քրիստոնյա Արևելքը») պարբերականի հրապարակումները և դրա գլխավոր խմբագիր Մ. Ռադեի՝ 1890-ական թթ. սկիզբ առած և կեսդարյա ժամանակաշրջան ընդգրկող հայանվեր գործունեությունը՝ քաղաքական պատմության լայն հենքի վրա: Այդ համատեքստում լուսաբանվում է ԳՀԸ-ի պատմությունը՝ սկսած հիմնադրումից մինչև 1940 թ., այսինքն՝ Ռադեի մահը:

Բարձր գնահատելով մենագրության գիտական արժանիքները, ԳՀԸ-ի պատմության հետազոտության գործում հեղինակի բերած մեծ ներդրումը՝ պետք է նաև նշենք, որ հայալեզու փաստական նյութերին և գերմանալեզու որոշ փաստաթղթերի ծանոթ չլինելը, ինչպես և ընկերության պատմությունը Մ. Ռադեի ու նրա պարբերականի գործունեությամբ պայմանավորված լուսաբանելը նրան հարկադրել են ոչ միայն շրջանցել կամ անտեսել հայ և գերմանացի ժողովուրդներին կամրջող՝ խնդրո առարկա կազմակերպության հիմնադրման ու գործունեության հետ կապված շատ

[24] Տե՛ս Kantian R., Phoenix aus der Asche: Von der Neugründung 1972 bis heute, // նշվ. ժող., S. 193-202.
[25] Տե՛ս նույնի՝ Der Weg der „Armenier-Resolution" des Bundestags, // նշվ. ժող., S. 204-218.
[26] Տե՛ս Drost-Abgarjan A., Gründergalerie der Deutsch-Armenischen Gesellschaft, // նշվ. ժող., S. 125-138.
[27] Տե՛ս Meißner A., Martin Rades "Christliche Welt" und Armenien. Bausteine für eine internationale Ethik des Protestantismus, Band 22, Berlin, "LIT Verlag", 2010.

մանրամասներ, այլև դրա պատմությանը վերաբերող հարցերը քննարկել այն հարցերին զուգահեռ, առանց որոնց բուն թեմայի հնարավորինս ամբողջական լուսաբանումն անհնար կլիներ: Օրինակ՝ ԳՀԸ-ի հիմնադրման պատմությունը ներկայացնող հատվածում (ինչպես ընկերության 100-ամյակին նվիրված ժողովածուում զետեղված իր հոդվածում) հեղինակը չի քննարկում դրա ստեղծման գործում ՀՅԴ-ի ունեցած դերակատարության, հայերի համար դրա օգտակարության հարցերը: Առաջին աշխարհամարտի ժամանակաշրջանին վերաբերվող հատվածում, շրջանցելով 1914 թ. Լ. Նազարյանցի՝ Կ. Պոլիս ուղևորությանը և Ռ. Դարբինյանի՝ Կովկաս գործողմանը, նշված վայրերում նրանց ծավալած գործունեությանը վերաբերվող հարցերը, նա ժամանակի իրադարձությունների ու զարգացումների համապատկերում լուսաբանում է ինչպես ԳՀԸ-ի, այնպես էլ Արևելքով հետաքրքրված գերմանական միսիոներական կազմակերպությունների և անհատների գործունեությունը: Նրան հայտնի չեն Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ընթացքում Գերմանիայի կառավարության մոտ Հայկական հարցի հայանպաստ լուծման համար ընկերության կատարած միջնորդության ու 1918 թ. հունիսին Հայաստանի կառավարության՝ Բեռլին ժամանած պատվիրակությանը նրա ցուցաբերած աջակցության իրողությունները: Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի մեղսակցության հարցը պարզաբանելիս հեղինակը ներկայացնում է Յ. Լեփսիուսի և ուրիշների անհատական գործունեությունն ու հարցի առնչությամբ ChW պարբերականի մեկնաբանությունները: Թեմատիկ ընդգրկմամբ պայմանավորված՝ գրքում չի լուսաբանվում ընկերության գործունեությունը Երկրորդ աշխարհամարտի տարիներին և դրա վերստեղծումից հետո:

Թեմային առնչվող որոշ խնդիրներ իրենց լուսաբանումն են ստացել Ու. Ֆայգելի, Հ. Ր. Գազերի, Թ. Հոֆմանի, Ա. Բաումանի աշխատություններում[28], «Լեփսիուսի տան» կողմից վերջին տարիներին հրապարակված ժողովածուներում ամփոփված հոդվածներում[29]:

Հայալեզու ուսումնասիրություններից կարելի է նախևառաջ հիշատակել Ս. Ստեփանյանի՝ 1998 թ. հրատարակված «Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը»[30] մենագրությունը: Հեղինակը, ներկայացնելով Լեփսիուսի կյանքը և հայանվեր

[28] Տե՛ս Feigel U., Das evangelische Deutschland und Armenien: die Armenierhilfe deutscher und evangelischer Christen seit dem Ende des 19. Jahrhunderts im Kontext der deutsch-türkischen Beziehungen, Göttingen, "Vandenhoeck & Ruprecht", 1989. Gazer H. R., Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im Ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts, Göttingen, "Vandenhoeck & Ruprecht", 1996. Hofmann T., Armenier in Berlin – Berlin und Armenien, Berlin, "Der Beauftragte des Senats für Integration und Migration", 2005. Baumann A.,Der Orient für Christus. Johannes Lepsius-Biographie und Missiolagie, Göttingen, "Hubert & Co.", 2007.
[29] Տե՛ս Anderson M. L., Helden in Zeiten eines Völkermords? Armin T. Wegner, Ernst Jäckh, Henri Morgenthau, // "Johannes Lepsius - Eine deutsche Ausnahme. Der Völkermord an den Armeniern, Humanismus und Menschenrechte" (hg. von Rolf Hosfeld), Göttingen, "Wallstein Verlag", 2013, S. 126-159. Hayruni A., Johannes Lepsius' armenische Verbindungen, // նշվ. ժող., S. 207-226. Hayruni A. und Hosfeld R., Johannes Lepsius und die armenische Frage im Beziehungsgeflecht des Weltkrieges, // "Das Deutsche Reich und der Völkermord an den Armeniern" (hg. von Rolf Hosfeld und Christian Pschichholz), Göttingen, "Wallstein Verlag", 2017, S. 217-243.
[30] Տե՛ս ՍտեփանյանՍ., Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը, Ե., «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան», 1998:

գործունեությունը համիդյան ջարդերի ընթացքում և Մեծ եղեռնի ժամանակաշրջանում, այդ համատեքստում թռուցիկ անդրադառնում է ԳՀԸ-ի հիմնադրման պատմությանը և դրա ծավալած գործունեությանն Առաջին աշխարհամարտի տարիներին:

Հ. Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում»[31] բազմահատորյակի V հատորում, որը հրապարակվել է 2013 թ., ի շարս այլ հարցերի, ընդհանուր գծերով լուսաբանվում է ԳՀԸ-ի ստեղծման պատմությունը, արժևորվում է այդ գործում հայ ժողովրդի գերմանացի բարեկամների ունեցած ավանդը, անդրադարձ է կատարվում "Mesrop" պարբերականին ու դրա հրապարակումներին:

Հիշատակման է արժանի նաև Ա. Հայրունու՝ 2002 թ. հրատարակված «Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը»[32] մենագրությունը, որտեղ համակողմանիորեն լուսաբանվում է գերմանացի այդ մեծ մտածողի կյանքը և նրա կողմից ստեղծված «Գերմանական արևելյան առաքելություն» (այսուհետև՝ նաև ԳԱԱ, գերմ.՝ Deutsche Orient-Mission, DOM) կազմակերպության կեսդարյա հայանպաստ գործունեությունը (1895-1943 թթ.), որը դիտարկվում է գերմանա-թուրքական քաղաքական ու դիվանագիտական հարաբերությունների և հայ ժողովրդի պատմության կարևորագույն իրադարձությունների համապատկերում: Այդ աշխատության առաջին գլխի վերջին՝ չորրորդ պարագրաֆում, ներկայացվում է ԳՀԸ-ի հիմնադրման պատմությունը՝ շեշտադրելով նշված հարցում Յ. Լեփսիուսի ունեցած ներդրումը:

Նույն հեղինակի «Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին»[33] և Հ. Ավետիսյանի «Հայկական հարցը 1918 թվականին»[34] մենագրությունները բովանդակում են արժեքավոր տեղեկություններ նշված ժամանակաշրջանում Հայկական հարցում Գերմանիայի վարած քաղաքականության, Հայաստանի երկու հատվածներում ծավալված իրադարձությունների, հայ-գերմանական հարաբերությունների տիրույթում ԳՀԸ-ի ծավալած գործունեության վերաբերյալ:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը 194 էջ է:

Ներածությունում հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանությունը, ժամանակագրական շրջանակը, աղբյուրագիտական հենքը և հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին՝ **«ԳՀԸ-Ի ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ (1914-1918 ԹԹ.)»** գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Ընկերության հիմնադրումը և աշխատանքների սկիզբը»,** ամփոփ ներկայացվում են XIX դարի 90-ական թթ. ի վեր Յ. Լեփսիուսի և գերմանացի մի

[31] Տե՛ս Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք V, Ե., «ԵՊՀ հրատ.», 2013:
[32] Տե՛ս Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Ե., «Նաիրի», 2002:
[33] Տե՛ս նույնի՝ Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թ., Ե., «ԵՊՀ հրատ.», 2013:
[34] Տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., «Բարձրագույն դպրոց», 1997:

քանի ուրիշ մտավորականների հայանվեր գործունեության և հայ ու գերմանացի ժողովուրդների միջև հարաբերությունների ամրապնդումը խթանելու հիմնական շարժառիթները: Այդտեղ նաև խոսք է գնում Գերմանիայի արևելյան քաղաքականության, գերմանա-թուրքական հարաբերությունների և Հայկական հարցում Գերմանիայի դիրքորոշման մասին: Այնուհետև անդրադարձ է կատարվում այն նախադրյալներին, որոնք հիմք դարձան ԳՀԸ-ի ստեղծման համար: Ներկայացվում են ընկերության նպատակները և խնդիրները, վարչության կառուցվածքը և կազմը, աշխատանքների սկզբնավորումը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Ընկերությունն Առաջին աշխարհամարտի բռնկումից հետո: Հայ կամավորական շարժումը կասեցնելու փորձերը և դր. Լիպարիտի առաքելությունը»,** քննվում են պատերազմի բռնկումից հետո գերմանաբնակ հայերի, հայ ռազմագերիների, գերմանական բուհերում սովորող հայ ուսանողների և օսմանյան պետությունում հայերի իրավունքների և անվտանգության ապահովման նպատակով ԳՀԸ-ի կողմից ի հայտ բերված նախաձեռնությունները և դրանց հիմնական արդյունքները:

Երրորդ ենթագլխում՝ **«Մեծ եղեռնը կասեցնելու և հայ աղետյալներին փրկելու՝ դր. Լեփսիուսի և ԳՀԸ-ի ջանքերը 1915–1917 թթ.»,** ներկայացվում են 1915 թ. ամռանը Յ. Լեփսիուսի՝ որպես ԳՀԸ-ի ու միաժամանակ ԳԱԱ-ի ղեկավարի Կ. Պոլիս ուղևորությունը և դրա հիմնական արդյունքները, Գերմանիայի կառավարության ձեռնարկումները Հայկական հարցի քննարկումը հասարակության մեջ լռության մատնելու ուղղությամբ և այդ առնչությամբ ընկերության դիրքորոշումը: Պարզաբանվում ու հիմնավորվում են այն դրդապատճառները, որոնց արդյունքում վերջինիս վարչությունը (բացի Յ. Լեփսիուսից), ի վերջո, տեղի տվեց՝ համակերպվելով պետական հրահանգին:

Չորրորդ ենթագլխում՝ **«Հայկական հարցը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1917-1918 թթ. և ԳՀԸ-ն»,** լուսաբանվում է Բրեստի բանակցությունների ընթացքում և հաշտության պայմանագրի ստորագրմանը հաջորդած ամիսներին (մինչև 1918 թ. աշուն) Գերմանիայի՝ Հայկական հարցում վարած քաղաքականությունը: Այդ համատեքստում ներկայացվում են ԳՀԸ-ի՝ Գերմանիայի արտաքին քաղաքական շահերը հայ ժողովրդի ազգային շահերին համապատասխանեցնելու ուղղությամբ կատարված աշխատանքները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՎԱՅՍՄԱՐՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԻՏԼԵՐՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ (1918-1956 ԹԹ.)»,** բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Միացյալ Հայաստանի իրագործմանը և հայ-գերմանական մշակութային կապերի զարգացմանը նպաստելու ուղղությամբ տարվող աշխատանքները 1918-1921 թթ.»,** քննվում են հետպատերազմյան առաջին տարիներին ԳՀԸ-ի կողմից իրականացված աշխատանքները, որոնց նպատակն էր նպաստել Հայոց ցեղասպանության հրապարակային դատապարտմանն ու Փարիզի վեհաժողովում Հայկական հարցի հայանպաստ լուծմանը, հայ-գերմանական մշակութային կապերի զարգացմանը:

Երկրորդ ենթագլխում՝ **«ԳՀԸ-ի գործունեությունը 1922-1930 թթ.»,** լուսաբանվում են 1922 թ. Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների հալածանքների կասեցմանը,

Լոզանի կոնֆերանսի և Ազգերի լիգայում Հայկական հարցի հետագա քննարկումների ընթացքում հայերի համար նպաստավոր որոշումների ընդունմանն աջակցելու նպատակով իրականացված աշխատանքները: Նաև անդրադարձ է կատարվում 1919 թ. Գերմանիայում սկսված և 1923 թ. իր բարձրակետին հասած տնտեսական ճգնաժամի՝ ԳՀԸ-ի վրա թողած ազդեցությանը, ներկայացվում են դրա վարչության ու պարբերականի վերաբերյալ մի շարք մանրամասներ:

Երրորդ ենթագլխում՝ **«Արտերկրում հայերի հանդեպ հալածանքների կանխարգելման, նրանց ազգային ինքնության պահպանման ու զարգացման ուղղությամբ ընկերության կողմից մղվող պայքարը և նրա լուծարումը (1933-1956 թթ.)»,** ներկայացվում են հիտլերյան վարչակարգի ժամանակաշրջանում հայ ժողովրդին ուղղված մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ ԳՀԸ-ի ծավալած պայքարը և դրա արդյունքները, պարզաբանվում են կազմակերպության լուծարման հիմնական շարժառիթները:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«ԳՀԸ-Ի ՎԵՐՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1973-2014 ԹԹ.»,** բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Ընկերության վերստեղծումը և գործունեությունը մինչև Արցախյան շարժման սկզբնավորումը»,** լուսաբանվում են ԳՀԸ-ի վերստեղծման պատմությունը, նոր մեկնարկից հետո՝ ընդհուպ մինչև Արցախյան շարժման սկզբնավորումը, նրա կողմից իրականացված հիմնական աշխատանքները, որոնք ուղղված էին գերմանական հասարակության իրազեկմանն ու հայ-գերմանական կապերի զարգացմանը, գերմանաբնակ հայերի ազգային ինքնության պահպանմանը, և, ի վերջո, նաև՝ 1970-ական թթ. վերջին ի հայտ եկած և ընկերության բնականոն գործունեությանը խանգարող ֆինանսական խնդիրների հաղթահարմանը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Ընկերության իրականացրած աշխատանքները 1988-1999 թթ.»,** քննվում են նշված ժամանակաշրջանում ԳՀԸ-ի կողմից իրականացված տեղեկատվական-քարոզչական աշխատանքները, 1988 թ. Սպիտակի աղետի հետևանքների վերացմանը, Արցախյան խնդրի հայանպաստ լուծմանը նպաստելու նպատակով ի հայտ բերված նախաձեռնությունները: Նաև ներկայացվում են Թուրքիայում ապրող հայերի վիճակը, այդ երկրի՝ Եվրոպական միության (ԵՄ) անդամ դառնալու հարցի վերաբերյալ ընկերության տեսակետը, և, ի վերջո, նրա հայանպաստ գործողությունները:

Երրորդ ենթագլխում՝ **«ԳՀԸ-ի գործունեությունը 21-րդ դարի առաջին մեկուկես տասնամյակում»,** նախ անդրադարձ է կատարվում Գերմանիայի Բունդեսթագում Հայոց ցեղասպանությանը վերաբերյալ բանաձևի ընդունման նպատակով տարվող աշխատանքներին և դրանցում ԳՀԸ-ի ունեցած դերակատարությանը, ապա՝ 2005 թ. հունիսյան բանաձևին, ներկայացվում է դրա դրույթների կատարման համար ընկերության պայքարը: Նաև վեր են հանվում խնդրո առարկա ժամանակաշրջանում նրա կողմից կազմակերպված գիտաժողովների ու մշակութային միջոցառումների մանրամասները:

Եզրակացություններ բաժնում ամփոփվում են հետազոտության հիմնական արդյունքները, ըստ որոնց՝ արվել են հետևյալ եզրակացությունները.

– XIX դարի 90-ական թթ. Գերմանիայի ավետարանական եկեղեցու ներկայացուցիչներ Յ. Լեփսիուսի, Պ. Ռոհրբախի և մի քանի ուրիշ գործիչների՝

համիդյան ջարդերի զոհերի նկատմամբ հետաքրքրության և նրանց հայանպաստ ջանքերի շարժառիթը կարեկցանքն էր, քրիստոնյայի՝ որպես Աստվածաշնչյան պատգամի հետևորդի խիղճը: Հայերի հետ սերտ կապի ընթացում նրանք հանգեցին այն եզրակացության, որ հայ ժողովուրդն Արևելքի ամենաօժտված ժողովուրդն է, եվրոպական մշակույթի ջահակիր է տարածաշրջանում և, որպես այդպիսին, կարող է Գերմանիայի շահերի ներկայացուցիչ դառնալ այնտեղ: Ըստ այդմ, նրանք իրենց առջև նպատակ դրեցին մշակութային սերտ կապ ստեղծել հայ և գերմանացի ժողովուրդների միջև, գերմանական մշակույթի ազդեցությամբ նպաստել հայերի ազգային-մշակութային զարթոնքին և տարածաշրջանի զարգացմանը: Այդ նպատակից նրանք երբևէ չհրաժարվեցին՝ հայանպաստ գործերով նախադրյալներ ստեղծելով դրա իրականացման համար: Բայց վերջիններիս՝ հայերի հանդեպ հետաքրքրությունը չպետք է պայմանավորել միայն գերմանական շահերով: Նրանք, հատկապես Յ. Լեփսիուսը, հայ ժողովրդի անկեղծ բարեկամներն էին, վտանգված հայերի նեցուկը: Նրանց հայանպաստ աշխատանքների շնորհիվ, որոնք երբեմն հակասում էին Գերմանիայի պետական-քաղաքական շահերին, հազարավոր անմեղ կյանքեր փրկվեցին:

– XX դարի երկրորդ տասնամյակի սկզբում Բալկանյան պատերազմի ծանր հետևանքներն Օսմանյան կայսրության համար ստիպեցին Գերմանիային, որը տնտեսական մեծ շահեր էր հետապնդում Փոքր Ասիայում, գիտակցել գերմանական շահերի և հայկական բարեփոխումների իրականացման ու հայերի հետ համագործակցելու կապակցվածությունը: Ուստի նա ոչ միայն ակտիվ դերակատարություն ունեցավ 1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) հայկական բարեփոխումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիրը գլուխ բերելու գործում, այլև Յ. Լեփսիուսին և նրա գաղափարակիցներին արտոնեց Բեռլինում կյանքի կոչել ԳՀԸ-ն (1914 թ. հունիսի 16), որի նպատակը գերմանացի և հայ ժողովուրդների մշակութային մերձեցմանը նպաստելն էր: Գրեթե միաժամանակ Բեռլինում ստեղծվեց Գերմանա-թուրքական միությունը՝ որպես երկու ժողովուրդների միջև մշակութային փոխըմբռնման կամուրջ: Գերմանիան ձգտում էր օգտագործել նշված երկու «խաղաքարտերը»՝ Օսմանյան կայսրությունում իր ազդեցությունն ամրապնդելու համար:

– ՀՅԴ-ի ներկայացուցիչները, որոնք համագործակցության մեջ մտան Յ. Լեփսիուսի և նրա գործընկերների հետ, կարևորում էին գերմանացի այդ ազդեցիկ մտավորականների՝ հայ ժողովրդի ազգային-մշակութային զարգացման, նրա ինքնավարության կամ անկախության հարցի նկատմամբ ունեցած մեծ հետաքրքրությունը:

– Առաջին աշխարհամարտի բռնկումից հետո ԳՀԸ-ն իր գործունեությունն ուղղեց հայ ժողովրդին սպառնացող վտանգների չեզոքացմանը:

– ԳՀԸ-ն դեմ էր Կովկասում հայ կամավորական շարժման ծավալմանը և փորձեց կանխել այն՝ կարծելով, որ այդ շարժումը կարող էր բացասաբար անդրադառնալ արևմտահայերի վիճակի վրա: Հիրավի, դրա հետևանքով երիտթուրքերն առիթ ունեցան հայերին ներկայացնելու իբրև «դավաճաններ», «հեղափոխականներ» և պատերազմի քողի տակ իրականացնել արևմտահայերին բնաջնջելու՝ վաղուց կազմած իրենց ծրագիրը:

– Լ. Նազարյանցի և Յ. Լեփսիուսի ուղևորությունները Կ. Պոլիս արևմտահայերի վիճակի մասին ստույգ տեղեկություններ ձեռք բերելու նպատակ էին հետապնդում: Ընկերությունը հույս ուներ, դրանք կառավարությանը ներկայացնելով, նրան դրդել օսմանյան կառավարության մոտ հայանպաստ միջամտության և կանխել թուրքերի հակահայ ընթացքը: Սակայն Գերմանիայի գերխնդիրը պատերազմում ամեն գնով հաղթանակի հասնելն էր, ուստի թուրքերի հետ դաշինքը վտանգելու մտավախությամբ՝ պատերազմի ամբողջ տևողության ընթացքում այն որևէ անգամ ազդեցիկ ճնշում չգործադրեց օսմանյան կառավարության վրա:

– Պատերազմի ժամանակ Գերմանիայում գործող գրաքննության արգելքների պայմաններում ԳՀԸ-ն փորձում էր արևմտահայերի վիճակի մասին տեղեկությունները հասարակության մեջ տարածելով՝ խթանել հայօգնության նպատակով հանրային դրամահավաքը, ինչը, սակայն, աննկատ չմնաց կառավարության կողմից: Այդ իրադրությունում ընկերությունը որոշեց գնալ համագործակցության կառավարության հետ և մինչև պատերազմի ավարտը Հայկական հարցը լռության մատնել (բացառություն կազմեց Յ. Լեփսիուսը, ով Հոլանդիայում շարունակեց իր համակողմանի հայանպաստ գործունեությունը), ինչը նրան թույլ տվեց շարունակել հայօգնության կազմակերպման աշխատանքները:

– Խորհրդային կառավարության կողմից «Թուրքահայաստանի մասին» դեկրետի հռչակումից հետո, Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ընթացքում, ԳՀԸ-ի գործունեությունը բնութագրվում էր Գերմանիայի կառավարության մոտ հայերի ազգային շահերի պաշտպանությանն ուղղված ջանքերով: Սակայն 1918 թ. մարտի 3-ին ստորագրված Բրեստի պայմանագրի արդյունքները ցույց տվեցին, որ ինչպես բոլշևիկները, այնպես էլ Գերմանիայի կառավարությունը չէին պատրաստվում սատարել հայ ժողովրդին և նպաստել նշված դեկրետի իրագործմանը: Հաջորդած ամիսներին ընկերությունը շարունակեց հայանպաստ պայքարը՝ արևմտահայերի անվտանգության, ՀՀ-ի հռչակումից հետո նրան վերաբերվող հիմնախնդիրները ներկայացնելով Գերմանիայի քաղաքական ղեկավարությանը, սակայն արտաքին սիրալիրությունից բացի՝ այդ պայքարում նա ուրիշ արդյունքի հասնել չկարողացավ:

– Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ԳՀԸ-ն շարունակեց Հայկական հարցի հայանպաստ լուծման համար պայքարը՝ նաև վերսկսելով հայ-գերմանական մշակութային կապերի զարգացմանն ուղղված աշխատանքները: Բայց ինչպես Փարիզի խաղաղության վեհաժողովի, այնպես էլ Լոզանի կոնֆերանսի և Ազգերի լիգայում Հայկական հարցի հետագա քննարկումների ընթացքում տերությունների դիրքորոշման վրա ազդելու և հայերի համար նպաստավոր որոշումների ընդունմանը հասնելու նպատակով նրա ծավալած պայքարը չհասավ իր նպատակին, քանի որ եվրոպական մեծ տերություններին հետաքրքրում էին եսական շահերը և ոչ հալածված ու հալածվող ժողովրդի ճակատագիրը: Այսուհանդերձ, ընկերության կողմից Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվությունը, զուգահեռաբար Հայաստանն ու հայկական մշակույթը ներկայացնող նյութերի լույսընծայումը նպաստեցին գերմանական հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

– Նացիստական երկրներում՝ Գերմանիայում և 1938 թ. նրան միացված Ավստրիայում, Իտալիայում, հայերը, որոնք նույնացվում էին հրեաների հետ, փրկվեցին վերջիններիս ճակատագրին արժանանալու վտանգից ԳՀԸ-ի և նրա բարեկամների

պայքարի շնորհիվ, որի ընթացքում փաստական հիմնավորումներով ապացուցելով հայերի արիական ծագումը՝ զուգահեռաբար ներկայացվում էին գաղթաշխարհի հայերի հետ մշակութային համագործակցության մեջ մտնելու անհրաժեշտությունը պարզաբանող տեսակետներ, որոնք էլ, մեր կարծիքով, իրենց դերակատարությունն ունեցան հայերի հանդեպ իշխանությունների տրամադրությունների փոփոխման և նրանց արիական ժողովուրդների անվանացանկում ընդգրկելու համար: Դրա շնորհիվ գաղթաշխարհի հայերը փաստորեն ոչ միայն փրկվեցին ցեղասպանվելու վտանգից, այլև մշակութային զարգացման ու ազգային ինքնության պահպանման հորիզոններ բացվեցին նրանց համար:

– Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո Գերմանիայում սկսված սոցիալ-տնտեսական ճգնաժամը ծանր անդրադարձում ունեցավ ԳՀԸ-ի վրա՝ դառնալով նրա գործունեության դադարեցման և լուծարման պատճառ:

– 1972 թ. ԳՀԸ-ի վերստեղծման շարժառիթը 1960-ական թթ. ի վեր Գերմանիայում հայերի թվաքանակի աճն էր և գերմանական հասարակության՝ հայ ժողովրդի մասին իրազեկվածության պակասը: Վերաբացված ընկերության առաջին նախագահը Ֆ. Հայերն էր, ով Հայդելբերգի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր էր և Երուսաղեմում ու Լիբանանում անձնական կապեր ուներ հայ հոգևորականների հետ: Հայ ժողովրդի ու հայկական մշակույթի նկատմամբ նրա հետաքրքրությունը, ըստ երևույթին, առաջ եկել իր գործունեության և հայերի հետ ունեցած անձնական շփումների ընթացքում:

– Վերաբացումից հետո ԳՀԸ-ի աշխատանքներն ուղղված էին գերմանական հասարակության իրազեկմանն ու գերմանաբնակ հայերի ինքնության պահպանմանը:

– 1980-ական թթ. երկրորդ կեսից ԳՀԸ-ն կենտրոնացավ մի քանի խնդիրների վրա, որոնց մեջ կարևոր տեղ էին զբաղեցնում Արցախյան խնդրի լուծումը և Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչումը, Թուրքիայում բնակվող հայերի իրավունքների ու շահերի պաշտպանությունը, 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացումը, 2005 թ. հունիսին Գերմանիայի Բունդեսթագի կողմից ընդունված՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևի դրույթների կատարումը, հայ-թուրքական երկխոսությունը, հայ-գերմանական բազմակողմ կապերի զարգացումը: Նշված ուղղություններով կատարված աշխատանքների հիմնական արդյունքները պետք է դիտարկել գերմանա-հայկական հարաբերությունների զարգացման համատեքստում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը, «Հայագիտության հարցեր», Ե., 2016, № 1, էջ 27-37:
2. Գերմանա-հայկական ընկերությունը եւ դր. Լիպարիտի առաքելությունը, «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 2018, ՀԵ. տարի, Ը, օգոստոս, էջ 106-124:
3. Հայոց ցեղասպանությունը կանխելու Յոհաննես Լեփսիուսի ջանքերը 1915 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, «Հայագիտության հարցեր», Ե., 2019, № 1, էջ 50-64:
4. Յո. Լեփսիուսի և նրա «Գերմանա-հայկական ընկերության» հայանպաստ գործունեությունը Եվրոպայում (1915 թ. սեպտեմբեր–1916 թ. հուլիս), «Պատմաբանասիրական հանդես», Ե., 2019, № 2, էջ 144-161:
5. Գերմանա-հայկական ընկերութան և Յոհաննես Լեփսիուսի դիրքորոշումը Հայկական հարցի հանդեպ 1916-1917 թթ., «Հայագիտության հարցեր», Ե., 2019, № 2, էջ 79-92:
6. Հայոց անկախ պետականության վերականգնման խնդիրը 1917-1918 թթ. և Գերմանա-հայկական ընկերությունը, «Հայագիտության հարցեր», Ե., 2019, № 3, էջ 151-161:
7. «Խոսելու ժամանակը եկել է». Մեծ եղեռնը եւ Հայկական հարցը Գերմանա–հայկական ընկերության հետպատերազմյան հրապարակախոսության մեջ, «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 2019, ՀԶ. տարի, Ը, օգոստոս, էջ 74-91:
8. Գերմանա-հայկական ընկերության ջանքերը երկու ժողովուրդների մշակութային կապերի զարգացման հարցում 1918-1921 թթ., «Հայագիտության հարցեր», Ե., 2020, № 2, էջ 144-154:
9. Գերմանա-հայկական ընկերության հայանպաստ գործունեությունը 1921-1922 թթ., «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 2020, ՀԷ. տարի, Թ, սեպտեմբեր, էջ 122-131:
10. Գերմանա-հայկական ընկերության հայանպաստ գործունեությունը 1933-1939 թթ., «Հայագիտության հարցեր», Ե., 2021, № 1, էջ 102-113:
11. Արցախյան հիմնախնդիրը, երկրաշարժը, հայերի հետապնդումները Թուրքիայում և Գերմանա-հայկական ընկերությունը (1988-1991 թթ.), «Հայագիտության հարցեր», Ե., 2022, № 1, էջ 126-138:
12. Գերմանա-հայկական ընկերութեան վերահիմնադրումն ու գործունեությունը 1973-1989 թթ., «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 2022, ՀԹ. տարի, Ե, օգոստոս, էջ 102:

СААКЯН ГРАНУШ АЛЬБЕРТОВНА

ОСНОВАНИЕ И ДЕЯТЕЛЬНОСТЬ НЕМЕЦКО-АРМЯНСКОГО ОБЩЕСТВА В 1914-2014 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении»

Защита состоится 26-го сентября 2023 г. в 14^{00} часов на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Данная диссертация посвящена исследованию и представлению столетней истории Немецко-армянского общества (Die Deutsch-Armenische Gesellschaft). Хронологические рамки исследования охватывают период с 1914 г. до 2014 г.

Диссертация состоит из введения, трех глав, заключений и списка использованных источников и литературы.

Во введении обоснована актуальность темы, обозначены цели и задачи, научная новизна, методологическая основа, хронологические рамки, источниковедческая основа диссертационной работы и степень изученности проблемы.

Первая глава - «Основание и деятельность Немецко-армянского общества до окончания Первой мировой войны (1914-1918 гг.)» состоит из 4-х параграфов. В первом параграфе рассмотрены и показаны мотивы проармянской деятельности немецких общественных кругов с конца XIX века. В этом контексте описаны особенности германо-турецких отношений и позиция Германии в Армянском вопросе. Затем представлены предпосылки, ставшие основой для основания рассматриваемого общества, а также его цели и задачи, структура и состав его правления и начало работ. Во втором параграфе рассмотрены инициативы, предпринятые организацией после начала войны в августе 1914 г. в целях обеспечения прав и безопасности армян, проживающих в Германии, армянских военнопленных, армянских студентов, обучающихся в немецких университетах, и армянского населения Османской империи. В третьем параграфе представлены и оценены усилия др. Лепсиуса и Немецко-армянского общества, направленные на приостановление геноцидальных актов против армян в Османском империи и помощь оставшимся в живых армянам, в первую очередь - десятки тысяч сирот и вдов. Четвертий посвящен изучению политики Германии в Армянском вопросе во время Брест-Литовских переговоров и в течение нескольких месяцев после подписания 3 марта 1918 г. мирного договора. В этом контексте освещается проармянская деятельность общества.

Вторая глава - «Деятельность общества во время Веймарской республики и гитлеровского режима и его ликвидация (1918-1956 гг.)» состоит из 3-х параграфов. В первом параграфе исследуются вопросы деятельности организации в первые послевоенные годы. Отметим, что в рассматриваемый период Немецко-армянское общество прилагал усилия для того, чтобы способствовать решению Армянского вопроса на Парижской мирной конференции и развитию армяно-германских культурных связей. Во втором параграфе рассмотрены проблемы, с которыми столкнулось общество в 1922-1930 гг., и шаги, предпринятые для их решения. В третьем параграфе рассмотрены шаги к преодолению вызовов, с которыми столкнулся армянский народ во время гитлеровского режима. В разделе также объяснены основные причины ликвидации организации.

Третья глава - «Воссоздание и деятельность Немецко-армянского общества в 1973-2014 гг.», состоит из 3-х параграфов. В первом параграфе освещается процесс воссоздания общества. Представлены структура и состав его правления, его цели и задачи, а также его деятельность с 1973 г. до 1988 г. Вторая посвящена изучению деятельности общества в 1988-1999 гг. Здесь, в частности, на основе немецких источников паказаны его акции по информированию немецкой общественности. Представлены и оценены также его шаги по поддержке пострадавших от Спитакского землетрясения 1988 года. Кроме того, изучены и выявлены его усилия для способствования проармянскому решению Арцахской проблемы. Наконец, представлены положение армянского населения в Турции, точка зрения организации на вопрос вступления этой страны в Европейский союз (ЕС), ее проармянские действия. В третьем параграфе, во-первых, сделана попытка показать процесс признания Геноцида армян и роль в нем Немецко-армянского общества. Затем обсуждаются резолюция о Геноциде армян, принятая Бундестагом Германии в июне 2005 года, и шаги организации по содействию реализации ее положений. В разделе также представлены научные конференции и мероприятия, организованные обществом в первые полтора десятилетия 2000-х годов.

В заключении изложены основные итоги и выводы исследования.

SAHAKYAN HRANUSH ALBERT

THE FOUNDATION AND ACTIVITIES OF THE GERMAN-ARMENIAN SOCIETY IN 1914-2014

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of «History of Armenia» 07.00.01.

The defense of the Dissertation will be held on September 26, 2023, at 14^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

This dissertation is dedicated to the research and presentation of the hundred-year history of the German-Armenian Society (Die Deutsch-Armenische Gesellschaft). The chronological framework of the study covers 1914-2014.

The Dissertation consists of the introduction, three chapters, conclusion, and bibliography.

The introduction focuses on the topicality of the paper, the aim and objectives of the research, the scientific novelty, the methodological basis the chronological framework, the source background and the degree of the problem under study.

The first chapter, "The Foundation and activities of the German-Armenian Society until the end of the First World War (1914-1918)", is divided into four subchapters.

The first subchapter examines and shows the motives for the pro-Armenian activities of German public circles from the end of the 19th century. In this context, the features of German-Turkish relations and Germany's position in the Armenian issue are described. Then the prerequisites are presented, which became the basis for the foundation of the Society in question, as well as its goals and tasks, the structure and composition of its board and the beginning of work.

The second subchapter examines the initiatives taken by the organization after the outbreak of the war in August 1914 in order to ensure the rights and security of Armenians living in Germany, Armenian prisoners of war, Armenian students studying in German universities, and the Armenian population of the Ottoman Empire.

The third subchapter presents and evaluates the efforts of Dr. Lepsius and the German-Armenian Society aimed at stopping the genocidal acts against Armenians in the Ottoman Empire and helping the survived Armenians, and in the first place - to tens of thousands of orphans and widows.

The fourth subchapter is devoted to the study of the policy of the German government

towards the Armenian issue during the peace negotiations at Brest-Litovsk and within a few months after the signing of the peace treaty of March 3, 1918. In this context, the pro-Armenian activities of the Society are elucidated.

The second chapter, "The activities of the Society during the Weimar Republic and Hitler's regime and its liquidation (1918-1956)", is divided into three subchapters.

The first subchapter examines the activities of the organization in the first post-war years. It should be noted that during the considered period, the German-Armenian Society made constructive efforts to contribute to the solve of the Armenian issue at the Paris Peace Conference and the development of Armenian-German cultural ties.

The second subchapter discusses the problems that Society faced in 1922-1930 and the steps taken to solve them.

The third subchapter examines the steps to overcome the challenges faced by the Armenian people during the Nazi regime. The subchapter also explains the main reasons for the liquidation of the organization.

The third chapter, "The Re-establishment and activities of the German-Armenian Society in 1973-2014", consists of 3 subchapters.

The first subchapter explains the process of re-establishing the Society. The structure and composition of its board, its goals and objectives, as well as its activities from 1973 to 1988 are presented.

The second subchapter is devoted to the study of the activities of the German-Armenian Society in 1988-1999. Here, in particular, on the basis of German sources, its actions to inform the German public are shown. Its steps to support the victims of the 1988 Spitak earthquake are also presented and evaluated. In addition, its efforts to contribute to the pro-Armenian solution of the Artsakh problem are studied and identified. At last, the situation of the Armenian population in Turkey, the organization's point of view on the issue of this country's accession to the European Union (EU), its pro-Armenian actions are presented. In the third subchapter, firstly, an attempt is made to show the process of recognition of the Armenian Genocide and the role of the German-Armenian Society in it. Then discusses the resolution on the Armenian Genocide, adopted by the German Bundestag in June 2005, and the organization's steps to promote the implementation of its provisions. The subchapter also presents scientific conferences and events organized by the Society in the first decade and a half of the 2000s.

The main findings and results of the study are summarized in the conclusion.